ԹԵՄԱ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԿՏԻՎԻԶՄ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տևողություն. 90 минут

Նյութեր.

նոթբուքեր, համապատասխան կայքերի և աղբյուրների հղումներ, տպագիր նյութեր, տեսանյութերի հղումներ կամ տեսողական սարքեր (պրոյեկտոր, էկրան), մարկերներ, թուղթ:

Տարիք. 15+

Մասնակիցների թիվ. 20

Համառոտ տեղեկատվություն առաջադրանքի վերաբերյալ.

Առաջադրանքի միջոցով սովորողներն ավելի լայն պատկերացում կկազմեն Հայաստանում քաղաքային ակտիվիզմի վերաբերյալ՝ քննարկելով քաղաքաշինությանը, մշակութային ժառանգությանը, սեփականության իրավունքին, տնտեսական անցմանն առնչվող խնդիրները, ինչպես նաև այդ գործընթացների շուրջ ծավալված քաղաքացիական ակտիվիզմի դրսևորումները/նախաձեռնությունները: Սովորողները կքննարկեն անցումը դեպի շուկայական տնտեսություն և այդ ընթացքում առաջացած խնդիրները, ինչպես նաև ակտիվիզմը, քաղաքային ակտիվիզմը, մշակութային և բնապահպանական իրավունքները: Նրանք նաև կգնահատեն նեոլիբերալ քաղաքաշինության/անցման բացասական ազդեցությունները Հայաստանում:

Հիմնական հարց.

Ինչո՞ւ է կարևոր մեր ֆիզիկական և բնական միջավայրին առնչվող հարցերում ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունենալը:

Կրթական վերջնարդյունքներ.

Սովորողները կկարողանան.

— աշխատել ականատեսների վկայությունների և այլ առաջնային աղբյուրների հետ,
— տարբեր խնդիրների վերաբերյալ իրենց կարծիքը/դիրքորոշումը հիմնավորելու համար օգտագործել տարբեր աղբյուրներ,
— քննարկել մարդկանց ակտիվ քաղաքացի դարձնող հիմնարար արժեքները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քայլ 1. Մտագրոհ (10 րոպե)

Գործողության նպատակը թեմայի հանդեպ հետաքրքրություն արթնացնելն է: Էկրանին երևում է հետևյալ հարցը (սլայդ 1, Հավելված 1) և ուսուցիչը սովորողներից մեկին խնդրում է պատասխանները գրանցել ֆլիփչարթի վրա.

— Ի՞նչ է քաղաքային ակտիվիզմը:

Հնարավորինս շատ պատասխաններ հավաքելուց/գրանցելուց հետո ուսուցիչն էկրանին ցույց է տալիս քաղաքացիական ակտիվիզմի որոշ սահմանումներ (սլայդ 2, Հավելված 1):

Քայլ 2. Ականատեսի ներկայացում (5 րոպե)

Ուսուցիչը ներկայացնում է ականատեսին՝ հարցազրույցում տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև հարցազրույցին կից տեղեկատվության հիման վրա: Ուսուցիչը կարող է նաև տպել Հավելված 2-ը և այն տրամադրել սովորողներին:

Քայլ 3. Հարցազրույցի հատվածի (22:22–28:05) դիտում և քննարկում (10 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը քննարկման է դնում հետևյալ հարցերը.

— Ի՞նչ է քաղաքային ակտիվիզմն Իզաբելայի կարծիքով:
— Ինչպե՞ս է քաղաքային միջավայրի կազմակերպումը կապված մեր կյանքին:

Քայլ 4. Հարցազրույցի հատվածի (2:36–7:04) դիտում և քննարկում (10 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը քննարկման է դնում հետևյալ հարցերը.

— Ըստ Իզաբելայի՝ որո՞նք եին անցումային շրջանի հիմնական ազդեցությունները Երևանի քաղաքային տարածքի և բնակիչների վրա:
— Որո՞նք են Իզաբելլայի մատնանշած հիմնական խնդիրները:

Ուսուցիչը պատասխանները գրանցում է ֆլիփչարթի վրա:

Քայլ 5. Հարցազրույցի հատվածի (8:34–13:34) դիտում և քննարկում (10 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը քննարկման է դնում հետևյալ հարցերը.

— Ինչպե՞ս և ինչո՞ւ Իզաբելլան ներգրավվեց քաղաքային ակտիվիզմում:
— Ո՞րն էր նրա համար շրջադարձային կետը:

Քայլ 6. Հարցազրույցի հատվածի (15:53–18:03) դիտում և քննարկում (10 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը քննարկման է դնում հետևյալ հարցերը.

— Ինչո՞ւմ են հաջողել Իզաբելլան և նրա ընկերները:
— Ի՞նչ անհաջողություններ են ունեցել և ինչո՞ւ:

Քայլ 7. Խմբային աշխատանք (20 րոպե)

Այս գործողության նպատակը թեման մեր երեք հիմնական թեմաներին կապելն է: Հարցազրույցի հատվածների քննարկումից հետո, ուսուցիչը սովորողներին բաժանում է երեք խմբի՝ Ժողովրդավարություն, Ապագաղութացում, Ժողովրդագրություն: Խմբերից յուրաքանչյուրին տրամադրվում է ֆլիփչարթ և համախատասխան թեմայի վերաբերյալ տպված տեքստ (Հավելված 3): Խմբերին տրամադրվում են նաև հետևյալ հարցերը/առաջադրանքները, որոնց նրանք պետք է պատասխանեն 12 րոպեում.

> **Խումբ 1.** Ձեր ստացած տեքստը կարդալուց հետո, ասացեք, խնդրեմ, կան արդյո՞ք **ժողովրդավարությանն** առնչվող գործընթացներ/խնդիրներ/մարտահարվեր, որոնց մասին նշում է Իզաբելլան:
>
> **Խումբ 2.** Ձեր ստացած տեքստը կարդալուց հետո, ասացեք, խնդրեմ, կան արդյո՞ք **ապագաղութացմանն** առնչվող գործընթացներ/խնդիրներ/մարտահարվեր, որոնց մասին նշում է Իզաբելլան:
>
> **Խումբ 3.** Ձեր ստացած տեքստը կարդալուց հետո, ասացեք, խնդրեմ, կան արդյո՞ք ժողովրդագրությանն առնչվող գործընթացներ/խնդիրներ/մարտահարվեր, որոնց մասին նշում է Իզաբելլան:

Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքները (8 րոպե):

Քայլ 8. Աշխատանք վիզուալ աղբյուրների հետ (5 րոպե)

Ուսուցիչը սեղանին դնում է մի քանի լուսանկար (օրինակները տես Հավելված 4-ում, ուսուցիչները կարող են նաև իրենք ընտրել նմանատիպ լուսանկարներ), որոնք ցույց են տալիս Երևանի քաղաքային տարածքի փոփոխությունների տարբեր կողմերը (Հավելված 4-ում ներառված լուսանկարները կապ ունեն ծրագրի հիմնական թեմաների հետ): Սովորողներին հանձնարարվում է ընտրել այն լուսանկարները, որոնք ներկայացնում/պատկերում են ժողովրդավարության, ապագաղութացման և ժողովրդագրության թեմաները և փակցնել նախորդ առաջադրանքի ժամանակ խմբերի ստեղծած համապատասխան ֆլիփչարթին:

Քայլ 9. Ռեֆլեքսիա/անդրադարձ (10 րոպե)

Վերջում ուսուցիչը սովորողներին խնդրում է անդրադառնալ հետևյալ հարցերին.

> — Ի՞նչ սովորեցի:
> — Ինչո՞ւ է կարևոր իմ բնակավայրին առնչվող հարցերում ակտիվ լինելը:

Ի՞ՆՉ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԿՏԻՎԻԶՄԸ

Քաղաքային ակտիվիզմ (պարզ գուգլ որոնում)

— Քաղաքային ակտիվիզմը վերաբերում է անհատների կամ խմբերի՝ քաղաքային միջավայրում սոցիալական, քաղաքական կամ բնապահպանական փոփոխություններ իրականացնելու ջանքերին: Նման շարժումը հաճախ առնչվում է բնակարանային, տրանսպորտի, հանրային տարածքի և բնապահպանական արդարության խնդիրներին՝ կենտրոնանալով տեղական համայնքների՝ իրենց իրավունքների և կարիքների պաշտպանության և առաջխաղացման գործում հզորացման վրա: Քաղաքային ակտիվիստների աշխատանքն ուղղված է համակարգային անհավասարություններին մարտահրավեր նետելուն և քաղաքային կայուն զարգացմանը նպաստելուն՝ քաղաքները դարձնելով ապրելու համար ավելի հարմարավետ և արդար:

https://library.fiveable.me/key-terms/africa-since-1800/urban-activism

— Քաղաքային ակտիվիզմը բարձրացնում է քաղաքացիների ձայնը քաղաքաշինության ոլորտում: Քաղաքային կամ քաղաքացիական ակտիվիզմը ենթադրում է, որ քաղաքացիները հետաքրքրություն և նախաձեռնողականություն են դրսևորում իրենց կառուցված միջավայրում կատարվող (կամ չկատարվող) փոփոխությունների, ինչպես նաև այդ միջավայրի կառավարման նկատմամբ:

https://www.girugten.nl/change-through-urban-activism-2/

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻԶԱԲԵԼԼԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Իզաբելլա Սարգսյան, **Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտե**

Իզաբելլա Սարգսյանը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) Մարդու իրավունքների ծրագրերի տնօրենն է, ինչպես նաև ԵԱՀԿ/ՀԺՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով փորձագետների խմբի անդամ: 1990-ականների ուսանող տարիներից նա շատ ակտիվ է եղել տարբեր քաղաքացիական նախաձեռնություններում՝ ուղղված ժողովրդավարական ընտրությունների ապահովմանը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, և մասնավորապես՝ նեոլիբերալ շինարարության նպատակով սեփականության ոտնահարված իրավունքների պաշտպանությանն ու Երևան քաղաքի կենտրոնի մշակութային ժառանգության ոչնչացման կանխմանը: Լրագրող և ավելի երիտասարդ սերնդի ակտիվիստ Ռուբեն Բանուչյանի հետ այս հարցազրույցում Իզաբելլան պատմում է Հայաստանում տարբեր քաղաքացիական նախաձեռնություններում և շարժումներում իր ներգրավվածության մասին, մասնավորապես՝ Երևանի մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների մասին: Նա կիսվում է ակտիվիզմի, քաղաքական դիրքորոշման, արժեքների և այլնի վերաբերյալ իր հայացքներով և համոզմունքներով:

2019 թ. ձևավորված Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտեն Երևանի բնակիչների, ճարտարապետների, արվեստաբանների, մշակութային մարդաբանների, քաղաքային միջավայրի հետազոտողների, գրողների և իրավապաշտպանների նախաձեռնություն է՝ ուղղված Երևանի մշակութային ժառանգության պաշտպանությանը: Այն նվիրյալների ոչ-ֆորմալ խումբ է, որը ձևավորվել է քաղաքացիների նմանատիպ նախկին նախաձեռնություններից՝ ուղղված Երևանի քաղաքային տարածքը անձնական շահույթ հետապնդող չկարգավորված կամ վատ կարգավորված քաղաքաշինական ծրագրերից պաշտպանելուն:

Տարածի ոստիկանը
ՑԻՐԴԻՆՍԸ